Աշխարհագրություն XII դասարան

Առաջին կիսամյակ /շաբաթական 1 ժամ/

2023-2024 ուստարի

Ժամ	N	Թեմա՝ *Աշխարհի ինքնատիպ տարածաշրջաններն ու երկրները*
Նպատակը		Իմանա աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող տարածաշրջանների հիմնական առանձնահատկությունները, բնորոշիչները, կարողանա որոշել տարածաշրջանի ու երկրի ինքնատիպության գլխավոր ցուցանիշները:
Վերջնար-դյունքները		Իմանա ուրբանիզացված, տնտեսական սրընթաց աճ արձանագրած, լեռնային, չորային /արիդ/, ագրարային տարածաշրջաններում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Կարողանա օգտվելով աշխարհատեղեկատվական համակարգերից, թեմատիկ քարտեզներից, քարտեզասխեմաներից, դիագրամներից և տեղեկատվական այլ աղբյուրներից վերլուծել ինքնատիպ տարածաշրջանների ու երկրների զարգացման հեռանկարները:
1	1	Դաս 1 Ներածություն: Աշխարհի ինքնատիպ բնատնտեսական պայմաններ ունեցող շրջանները, դրանցում հասարակության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները
1	2	Դաս 2 Ուրբանիզացված տարածաշրջաններ և երկրներ. /Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ-ի ծովափնյա շրջաններ, Ճապոնիա/ Դաս 3 Տնտեսական սրընթաց աճ արձանագրած տարածաշրջաններ և երկրներ /Ասիական վագրեր, Չինաստան/
1	3	Դաս 4 Լեռնային տարածաշրջաններ ու երկրներ, զարգացման բնատնտեսական պայմանները, հիմնական առանձնահատկությունները: Դաս 5 Չորային /արիդ/ և ագրարային տարածաշրջանների և երկրների տնտեսության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:
1	4	Դաս 6 Արևմտյան Եվրոպան որպես քաղաքական և տնտեսական միասնացման գործընթացի տարածաշրջան
1	5	Դաս 7 Ռուսաստանի Դաշնությունը որպես բնառեսուրսային մեծ ներուժ ունեցող պետություն:
1	6	Դաս 8 ԱՄՆ-ը որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական դերակատարում ունեցող երկիր
1	7	

		Թեմատիկ գրավոր աշխատանք
		Թեմա՝ ***Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները***
Նպատակը		Ծանոթ լինի մարդկության համամոլորակային հիմնախնդիրների առաջացման գլխավոր պատճառներին:
Վերջնար-դյունքները		Իմանա հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների, բնության պահպանության, ժողովրդագրական, պարենային, թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման, տարածքային և էթնիկ հակամարտությունների, համաշխարհային օվկիանոսի համամոլորակային հիմնախնդիրների առաջացման պատճառները, կապը համամոլորակային մյուս հիմնախնդիրների հետ, լուծման ուղիները: Գնահատել համամոլորակային հիմնախնդիրների զարգացման /խորացման/ և դրանց լուծման համամարդկային ներուժի համալիր փոխառնչությունները:
1	8	Դաս 1 Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, դրանց լուծման ժամանակակից ռազմավարությունը:
1	9	Դաս 2 Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների համամոլորակային հիմնախնդիրները: Դաս 3 Բնապահպանական համամոլորակային հիմնախնդիրները:
1	10	Դաս 4 Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը: Դաս 5 Պարենային համամոլորակային հիմնախնդիրը:
1	11	Դաս 6 Թույլ զարգացած երկրների հետամնացության վերացման և բնակչության աղքատության հաղթահարման համամոլորակային հիմնախնդիրը:
1	12	Դաս 7 Տարածքային և էթնիկ հակամարտությունների հիմնախնդիրը:
1	13	Դաս 8 Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:
1	14	Անցած թեմաների կրկնություն
1	15	Պահուստային ժամ